

14322



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«24» 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 289 - 24

Նախաձեռնող՝

«Նորաշեն» ՆՏ ԱԿ
ք. Երևան, Հայաբյան փ., 11-36

Գործունեությունը՝

Աշտարակ համայնքի Վ.Պետրոսյանի անվան 1000
աշակերտի համար նախապեսված դպրոցի կառուցում
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 6 թերթ

կաթսայատունը՝ 63.8 մ², պահակատունը՝ 12.3 մ², տնտեսական շինությունը՝ 19.35 մ², ճաշարանը՝ 117.3 մ², ծածկ՝ 75.9 մ²:

Ցանկապատված տարածքի մակերեսը կազմելու է 3.9047 հա, դպրոցի կառուցապատման մակերեսը՝ 5445 մ², օժանդակ կառույցները՝ 563 մ², բարեկարգման մակերեսը(անջրանցիկ)՝ հրապարակ, ավտոճանապարհները՝ 4436 մ², մայթերը, տրիբունաները, սանդուղքները՝ 3650մ², բասկետբոլի խաղադաշտը՝ 608մ², պատերը, եզրաքարերը 616մ²:

Շինարարության ընդհանուր տևողությունը կազմելու է 36 ամիս:

Դպրոցը նախատեսված է 1-ից 9-րդ դասարանների (տարրական և միջին) 1000 աշակերտի համար: Շենքի առանցքային չափերը կկազմեն 78.3x66.4 մ: Նախատեսվում է բակային հրապարակ 1800 մ² մակերեսով, ֆուտբոլի, վոլեյբոլի խաղադաշտ, մարզահրապարակներ, տաղավարներ, ենթակայան, ընդարձակ կանաչապատ տարածքներ, շրջանցող ավտոճանապարհներ, ներքին ավտոճանապարհներ, անցումներ և մայթեր: Հարկերի բարձրությունները կկազմեն 3.3 մ՝ բացառությամբ հանդիսությունների դահլիճի և մարզադահլիճի: 0.00 նիշում նախատեսված է 12.0 x 30.0 մ առանցքային չափերով ներքին բակ: Բակին հարակից տեղակայված են ռեկրեացիոն տարածքներ: Մի կողմից՝ առաջին հարկում նախատեսված է ճաշարանը, երկրորդ հարկում դասասենյակները, երրորդ հարկում հանդիսությունների դահլիճը: Տանիքը ծածկված կլինի եվրոստանդարտներին համապատասխանող պոլիկարբոնատով: Տարրական դասարանների համար նախատեսված են խաղասենյակներ, դասարաններ, ննջարան, թուլակազմ երեխաների քնի կազմակերպման հատուկ սենյակներ, ռեկրեացիոն տարածքներ, մեթոդական կաբինետ, ուսուցչանոց, 5-9-րդ դասարանցիների համար նախատեսված են ուսումնական կաբինետներ, լաբորատորիաներ, դասարաններ, վարչական նշանակության սենյակներ, բժշկի, ատամնաբույժի կաբինետներ: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված են լոգաթցիկ և սանհանգույց: Նախատեսվում է դպրոցը հագեցնել կույրերի և տեսողության խնդիրներ ունեցող երեխաների համար համապատասխան սարքավորումներով: Երրորդ հարկում նախատեսված է 6.2 մ բարձրությամբ 14.4.0x24.0 մ առանցքային չափսերով հանդիսությունների դահլիճը, ինչին կից կտեղակայվեն մարզիչի սենյակը, մարզագույքը, հանդերձարանները, գրադարանն ու դասարանները: Դահլիճը կունենա անմիջական կապ նույն հարթության մեջ գտնվող բացօթյա մարզահրապարակի հետ: Ճաշարանը տեղավորված կլինի 1-ին հարկում՝ առանձնացված մուտքով, կունենա 226 մ² մակերես: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Տարածքում առկա են ծառափայլի բուսականություն: Նոր կրթահամալիրի կառուցման ընթացքում ծառահատումներ չի նախատեսվում: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումն իրականացվելու է ցնցուղային, նաև նախատեսված են ռետինե խողովակներ՝ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Դպրոցի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու է «Ընդլիար Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:



Տաք ջրի մատակարարումը նախատեսվում է իրականացնել դպրոցի տանիքում տեղադրված արևային ջրատաքացուցիչների միջոցով, որտեղ ջուրը տաքանալուց հետո կիջնի կաթսայատանը տեղադրված 1000 մ³ տարողությամբ բաք և օգտագործվի դպրոցի կարիքների համար: Այն օրերին, երբ արևային ջրատաքացուցիչները լրիվ չեն հասցնի տաքացնել ջուրը, վերջինս կտաքացվի նաև կաթսայատանը նախատեսված արագընթաց ջրատաքացուցիչներով:

Դպրոցի կոյուղու արտաքին համակարգը նախատեսվում է իրականացնել d=200-150մմ տրամագծի կոյուղու պոլիէթիլենային ծալքավոր լայնուկավոր խողովակներից: Կառուցվելու է կոյուղու 12 դիտահոր և մաքրման կայան, որտեղից դուրս եկող մաքրված ջուրը միանալու է գոյություն ունեցող կոյուղագծին նոր կառուցվող դիտահորում:

Նախատեսվում է դպրոցի տարածքի գրունտային մակերևույթին տեղադրել 174 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ, ինչը կազմված կլինի 300 հատ միաբյուրեղային 580 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից: ՖՎ կայանի փոխակերպիչները 3-ն են՝ 30 կՎտ և 2 հատ 60 կՎտ պիկային հզորությամբ, որոնք մոնտաժվելու են ՖՎ հենակառուցվածքի վրա ձգման միջոցով:

Էներգախնայողության նպատակով իրականացվելու են շենքի արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում: Պատուհանները նախատեսված են բարձր թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելության փոքր տոկոսով: Օդատարների ջերմամեկուսացումը կլինի ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով: Կիրառվելու է օդորակման բարձր արդյունավետության համակարգ:

Գազամատակարարումը հնարավոր է իրականացնել Գեներալ Սաֆարյանի անվան փողոցով անցնող ցածր ճնշման 0.50 մմ տրամագծի վերգետնյա գազատարից:

Հողային աշխատանքների ժամանակ նախատեսվում է, որ կառաջանա 26113 մ³ հողային հանույթ, որից 7800 մ³ հանույթն օգտագործվելու է հետլիցքի նպատակով:

Ավելացած 18113 մ³ հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից օրենքով սահմանված վայր: Հետլիցքի համար նախատեսված հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում, փոշենստեցման համար պարբերաբար կիրականացվի ջրցան:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու է շինարարական աղբ՝ ներառյալ քանդման աշխատանքներից առաջացած՝ 200 մ³ ծավալով, կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) 120 մ³ ծավալով և փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 18113 մ³ ծավալով: Դպրոցի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ Աշտարակ քաղաքի աղբավայր, որը դպրոցի տարածքից գտնվում է 5 կմ հեռավորության վրա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
- կառուցապատման ենթակա տարածքը նախատեսվում է ցանկապատել,
- շինությունները ծածկվելու են համապատասխան բարձրության պայտիանց թաղանթով,



- փոշենստեցման նպատակով նախատեսվում է շինարարական աշխատանքների ընթացքում իրականացնել ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- նախատեսվում է իրականացնել շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողների լվացում,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասսե 25 մ³ ծավալով տարողություն: Պարզարանում տեղի է կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ,
- վտանգավոր արտահոսքերի դեպքում առաջացած հետքերն անմիջապես կլանիչ նյութով մաքրվելու են,
- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- նախատեսվում է խուսափել զգայուն ազդակակիրների հարևանությամբ մեքենաների և սարքավորումների կայանելուց, ինչպիսիք են՝ բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,
- շինարարական աշխատանքներում նախատեսվում է ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- բոլոր մեքենաները պետք է ապահովված կլինեն համապատասխան խլացուցիչներով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ 3 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազար ՀՀ դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մշտարակ համայնքի Վ. Պետրոսյանի անվան 1000 աշակերտի համար նախատեսված դպրոցի կառուցման



մշտադիտարկման աշխատանքներ և տեսակին բնորոշ առանձնյակների հայտնաբերման դեպքում իրականացնել առանձնացման, տեղափոխման, պահպանության և պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:

11. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Նորաշեն» ՆՏ ԱԿ -ի կողմից ներկայացված Աշտարակ համայնքի Վ. Պետրոսյանի անվան 1000 աշակերտի համար նախատեսված դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Էսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան